Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի «Մրգաշատի Վ.Ափոյանի անվան հ.1 միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), ինֆորմատիկայի (7 դասաժամ), կերպարվեստի 3 (դասաժամ) և երաժշտության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար :

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի ,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

-անձը հաստատող փաստաթուղթ

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5)

-այլ պետության քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փատաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենի հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համլրել դրանք :

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև փետրվարի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 28-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մրգաշատի Վ.Ափոյանի անվան Հ.1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն գ.Մրգաշատ, 5-րդ փ.15 շ. :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 00-06-34 հեռախոսահամարով: